Հայ գրական հուշարձանները և հայ գրականագիտական մտքի նվաճումները Սովետական Միության գիտական հասարակայնությանը հասու դարձնելու գործը այսուհետև ևս ինստիտուտի հատուկ ուշադրությանն է արժանանալու:

Ինստիտուտը պարբերաբար կազմակերպում է գիտական նստաշրջաններ, որոնք հետազոտական աշխատանքների կարևորագույն արդյունքների յուրահատուկ ամփոփումն են:

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը՝ հանրապետության հայագիտական կարևոր օջախներից մեկը, որն իր շուրջն է համախմբել նաև ինստիտուտից դուրս գտնվող լավագույն գրականագետներին, հետազոտում է հայ գրականության հարուստ գանձարանը և բացահայտում նրա զարգացման օրինաչափությունները:

ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Վ. ՉԱՐՅԱՆ
Արվեստի ինստիտուտի դիրեկտոր, արվեստաբանության դոկտոր

Արվեստի ինստիտուտը ստեղծվել է 1958-ին:

Ինստիտուտին նախորդել է արվեստների պատմության և տեսության սեկտորը, որի հիմքի վրա էլ կազմակերպվել է մեր ինստիտուտը:

Իր հիմնադրման պահին ինստիտուտն ուներ ընդամենը 18 աշխատակից, հիմա՝ 86: Ինստիտուտի գոյության առաջին տարիներին գործում էին հետևյալ բաժինները. երաժշտության (բաժնի վարիչ՝ նախ Մ. Մուրադյան, հետո Գ. Գյոդակյան), հարարապետության (բաժնի վարիչ՝ Ալ. Սահինյան), թատրոնի ու կինոյի (նախ՝ Ռ. Չարյան, հետո՝ Դ. Ստեփանյան, հիմա՝ Լ. Հախվերդյան) և կերպարվեստի (նախ՝ Ռ. Դրամբյան, հետո՝ Ռ. Պարսամյան, հիմա՝ Ստ. Մնացականյան): Հետագայում ավելացան նաև կիրառական արվեստների (1959, բաժնի վարիչ՝ նախ՝ Ս. Դավթյան, հետո՝ Ռ. Դրամբյան, հիմա՝ Մ. Ղազարյան), մշակութային առնչությունների (1966, բաժնի վարիչ Գ. Հովնան), ժողովրդական երաժշտության (1967, բաժնի վարիչ՝ Մ. Մուրադյան): Եվ սրանց կողքին՝ շեքսպիրագիտության հայկական կենտրոն (ղեկավար՝ Ռ. Չարյան): Մի խոսքով՝ 8 բաժին:

Ինստիտուտում աշխատում են գիտությունների 7 դոկտոր և 34 թեկնածու: Այստեղ են աշխատել արվեստաբանական մտքի ավագ սերնդի ներկայացուցիչներ՝ Քրիսաֆոր Քուշնարյանը (1890—1960), Լիդիա Դուրնովոն (1885—1963), Մուշեղ Ադայանը (1888—1966), Վահրամ Թերզիբաշյանը (1898—1964) և Վահրամ Փափազյանը (1888—1968):

Ինստիտուտի գիտական գործունեությունն ընթանում է հետևյալ հիմնական ուղղություններով.

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԲԱԶՄԱԴԱՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ: Պետք է ասել, որ արվեստի տարբեր բնագավառների պատմությունը գրելու անդրանիկ քայլն արել է ինստիտուտը: Անչափ ծանր մի գործ, քանի որ նախ՝ ոչ մի նախավորձ չկար: Երկրորդ՝ բազմաթիվ նոր նյութեր էին կուտակվել վերջին շորս-հինգ տասնամյակի ընթացքում և ժամանակ էր հարկավոր, որ դրանք

մշակվեին ու մտնեին գիտական շրջանառության մեջ: Երրորդ՝ եթե այդ նյութերը մի մասով հարստացնում էին մեր արդեն ունեցած պատկերացումը, ապա մի մասով էլ հարկադրում էին վերանայել ավանդական շատ ըմբռնումներ: Հետո՝ պատմություն գրելուն պետք է նախորդեին ինչպես խոշոր դեմքերին, այնպես էլ առանձին ժամանակաշրջաններին ու հանգուցային խնդիրներին նվիրված մենագրական ուսումնասիրություններ: Վերջապես՝ մեծագույն դժվարություններից մեկն էլ արվեստի տվյալ նյութի պատմության հիշտ, այսինքն՝ գիտական պարբերացում կատարելն էր: Այս դժվարությունն իր բարդություններն ուներ: Չունենալով մեր ժողովրդի քաղաքացիական պատմության գիտական մշակումը, սրվեստաբանը ինչ-որ դեպքերում ինքը պետք է կատարեր նաև պատմաբանի դեր: Ժամանակը և փորձը ցույց տվին, որ քաղաքացիական պատմության համար գտնված պարբերացումը կարող է օգնել, կողմնորոշել, բայց ի վիճակի չէ փոխարինելու, որովհետև միշտ չէ, որ քաղաքացիական կյանքի ու արվեստի զարգացումը համաչափ ընթացք են ունեցել: Ավելին, որքան խորացանք, այնքան համոզվեցինք, որ մի միասնական պարբերացում չի կարող լինել արվեստի այլ և այլ ճյուղերի համար. արվեստի տարբեր ճյուղերը տարբեր պատմափուլերում, զարգացման տարբեր աստիճանների վրա են գտնվել:

Այդ պատճառով էլ հարմար գտնվեց նախ՝ արվեստի մի քանի բնագավառների պատմության հանրամատչելի միհատորյակներ ստեղծել, ապա նոր միայն անցնել ամբողջական ընդգրկման գիտական մշակման փորձին:

Դրա արդյունքը եղան միհատորյակներ՝ «Ակնարկ հայ երաժշտության պատմության» (1963, հեղինակներ՝ Ք. Քուշնարյան, Մ. Մուրադյան և Գ. Գյոնչակյան), «Ակնարկ հայ հարտարապետության պատմության» (1964, հեղինակներ՝ Կ. Հովհաննիսյան, Ալ. Սահինյան, Ստ. Մնացականյան և Լ. Բաբտյան): Բացի այդ՝ «Սովետահայ թատրոնի պատմությունը» (1967, հեղինակներ՝ Լ. Հախվերդյան, Ս. Ռիզաև, Լ. Խալաթյան, Բ. Հարությունյան, Խ. Ավագյան): Սրան նախորդել է «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության» աշխատությունը (1960, հեղինակ՝ Ս. Մելիքսեթյան):

Պատմության ուսումնասիրության ամբողջական ընդգրկման հասնելու հանապարհին անհրաժեշտ է եղել ուսումնասիրել առանձին հարցեր: Ք. Քուշնարյանի «Միաձայն երաժշտության պատմության և տեսության հարցերը» (1958), Սրբ. Լիսիցիանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» աշխատության առաջին հատորը (1958), Գ. Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» առաջին երկու հատորները (1962, 1969), Ռ. Աթայանի «Հայկական խազային նոտագրությունը» (1959), Լ. Ազարյանի «Կիլիկյան մանրանկարչությունը 12—13-րդ դդ.» (1964), Դ. Տիգրանովի «Հայ երաժշտական թատրոնը» երկու հատորով (1960), Ստ. Մնացականյանի «Հայ հարտարապետության Սյունիքի դպրոցը» (1960): Այս շարքից են նաև Լ. Հախվերդյանի «Սուրեն Քոչարյանի արվեստը» (1958) և «Կլասիկան և մեր օրերը» (1962), Ալ. Թաղևոսյանի «Սպիրիդոն Մելիքյանը և ժողովրդական երաժշտությունը» (1964), Լ. Խալաթյանի «Սայաթը և թատրոնը» (1960), Ս. Ռիզաևի «Հայկական ռեժիսուրան» (1968), Հ. Ղալփախչյանի «Հայաստանի արտադրական կառուցվածքները» (1961), Կ. Հովհաննիսյանի «Էրեբունին» հայերեն և ռուսերեն (1968), Բ. Առաքելյանի, Վ. Հարությունյանի և Ստ. Մնացականյանի «Հայկական հարտարապետության պատմության մի քանի հար-

ցերի մասին (Գ. Ն. Չուբինաշվիլու «Որոնումներ հայկական ճարտարապետության բնագավառում» աշխատության առթիվ)» (1969)։

Պետք է հիշատակվեն նաև արվեստի խոշորագույն դեմքերին նվիրված մենագրությունները՝ Ս. Հարությունյանի «Միհրդատ Ամրիկյան» (1959), Ռ. Դրամբյանի «Մարտիրոս Սարյան» (1960), Վ. Հարությունյանի «Վարդգես Սուրենյանց» (1960), Ռ. Զարյանի «Պետրոս Ադամյան» (1960), Վ. Մաթևոսյանի «Սեդրակ Առաքելյան» (1963). Հ. Հովհաննիսյանի «Մարտիրոս Մնակյան» (1969). Գ. Գյոդակյանի «Ռոմանոս Մելիքյան» (1960), «Կոմիտաս» (1969). Ի. Յոլյանի «Կոմիտաս» (1969)։

Այժմ ինստիտուտն անցել է հայ արվեստի պատմության բազմահատորյակների ստեղծման դժվարին գործին։ Հեղինակային խմբեր են կազմվել, որոնք գրելու են «Հայ ճարտարապետության պատմությունը» չորս հատորով, «Հայ կերպարվեստի պատմությունը» երեք հատորով, «Հայ երաժշտական մշակույթը» երեք հատորով. Օրերս լույս կտեսնի այս բազմահատորյակի երկրորդ հատորը, որի նյութն է հայ երաժշտությունը XIX դարում և XX դարասկզբում (հեղինակ՝ Մ. Մուրադյան)։

Ինստիտուտը զբաղվել է նաև կինոարվեստի ուսումնասիրության խնդիրներով։ Մեր մասնագետները ձեռնամուխ եղան մի շնորհակալ գործի՝ «Հայկական կինոարվեստը» ժողովածուի հրատարակությանը, որով հիմք էր դրվում կինոգիտությանը մեզանում։ Լույս տեսան առաջին ու երկրորդ գրքերը միայն (1958, 1960)։ Հրատարակվել է նաև Ս. Ռիզաևի «Հայկական գեղարվեստական կինեմատոգրաֆիան» ընդարձակ հետազոտությունը (1963)։

Ինստիտուտի հետազոտական կյանքում զգալի տեղ են գրավում տարեգրական աշխատանքները։ Լույս են տեսել Բ. Հարությունյանի «Սովետահայ թատրոնի տարեգրության» երկու հատորները, որոնք ընդգրկում են 1917—1960 ժամանակաշրջանը (1961, 1969)։ Ռ. Մազմանյանը կազմել է «Սովետահայ երաժշտական մշակույթի տարեգրությունը» (1920—1945), իսկ Մ. Ղազարյանը «Սովետահայ կերպարվեստի տարեգրությունը» (1917—1960)։

Մեր ինստիտուտի գիտական գործունեության մի ուղղությունն էլ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ է։

Արվեստի այս ճյուղի ուսումնասիրությունը կարելի է ասել խոպան է գիտության մեջ։ Եթե համեմատաբար ուսումնասիրվել է երգը, ապա ասեղնագործությունը, խեցեգործությունը, փայտագրությունը, արծաթագործությունը, ապակին և այլ բնագավառներ և նույնիսկ գորգը (որի շուրջ մի երկու աշխատություն ստեղծվել է) խոր և համակողմանի ուսումնասիրության կարոտ են։ Որոշվեց այդ գիտության հիմքը դնելու համար աշխատանքի մեջ ներգրավել մի կողմից տվյալ արվեստի տեխնոլոգիան ու ազգագրությունն իմացողներին, մյուս կողմից՝ երիտասարդ ուժերի։

Այդ նպատակով ստեղծվեց հայ ժողովրդական երաժշտության ինքնուրույն բաժին, որի արշավախմբերը Հայաստանի և նրա սահմաններից դուրս գտնվող հայաբնակ քաղաքներում և գյուղերում հավաքում և ձայնագրում են ժողովրդական երգեր։ Մինչև այժմ հավաքած երգերի թիվը 7.000-ից անցնում է։

Այս բաժնում, վերջին տարիները, ներգրավվեց Կոմիտասի աշակերտ Միհրան Թումանյանը, որը 40 տարիների ընթացքում հավաքել է արևմտահայ տարբեր օջախների՝ Սեբաստիայի, Ակնի, Կյուրինի, Շատախի և այլ գավառների երգեր, թվով երկու հազար, որոնք այժմ պատրաստվում են հրապարակման

«Հայրենի երգն ու բանը» վերնագրով: Արդեն տպագրության է հանձնված առաջին հատորը:

Ստեղծվել է նաև կիրառական արվեստների պատմությունն հետազոտող բաժին, ուսումնասիրվում են՝ ասեղնագործություն, գորգագործություն, խեցեգործություն, դաջի արվեստը: Լույս է տեսել առայժմ մի աշխատություն՝ Ս. Դավթյանի «Հայկական մանյակ» (1966):

Հայ ժողովրդական ճարտարապետությունն ուսումնասիրելու նպատակով ևս պարբերաբար աշխատանք է կատարվում: Դրա արդյունքը եղավ «Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը», որն արդեն տպագրության է հանձնված (հեղինակ՝ Ն. Պապսիսյան): Այս բնույթի ուսումնասիրություն է նաև Է. Հակոբյանի «Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը» (1964):

Մյուս ուղղությունը ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՅԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ է:

Գիտության այս ասպարեզը բոլորովին նոր է, մեր իրականության ծնունդ: Ինչպես միշտ գիտական նշանակալի ընդհանրացումներին նախորդում է փաստագրական նյութի կուտակում: Հավաքված են մեծ թվով փաստեր, շատ հետաքրքիր տվյալներ: Եթե մոտիկ անցյալում մշակութային կապերի արտահին կողմն էր մեծ մասամբ ուսումնասիրության առարկա, այժմ արդեն նկատելի է մեծ ձգտում խորանալու ազգային տարբեր մշակույթների փոխներգործման երևույթների մեջ:

Մշակութային առնչությունների ուսումնասիրությունը ունի ոչ միայն գիտական, այլ նաև քաղաքական իմաստ: Ըստ էության լինելով ժողովուրդներին միմյանց մոտեցնող ու իրար սիրելի դարձնող երևույթների ու դրանց օրինաչափությունների բացահայտում, մեծապես նպաստում է այդ մշակույթները ստեղծող, նրա դարավոր ավանդները կրող ժողովուրդների ու մեր ժողովրդի հոգևոր մերձեցմանն այսօր:

Ունենալով հայ-ռուսական մշակութային հարաբերության ուսումնասիրության բավական մեծ փորձ, ինստիտուտն այժմ ընդլայնել է հետազոտական իր նախասիրությունները, շարունակելով ուսումնասիրել եղբայրական ժողովուրդների հետ մեր ունեցած կապերը՝ մի կողմից ռուսական, մյուս կողմից՝ վրացական, ուկրաինական և վերջապես՝ արևմտա-եվրոպական՝ լեհական, չեխական, հունգարական, ֆրանսիական: Վերջերս լույս տեսավ «Վ. Ստասովը, Ալ. Վեսելովսկին, Մ. Գորկին և Ան. Լունաչարսկին Հայաստանի և հայ կուլտուրայի մասին» գիրքը (1970, կազմող՝ Ի. Սաֆրազբեկյան): Այս մատենաշարով այժմ տպագրության են պատրաստվում Իոսեբ Գրիշաշվիլուն և Սերգեյ Գորոդեցկուն նվիրված ժողովածուները: Հրապարակվել են նաև Վ. Վարդանյանի «Ռուսական առաջավոր թատերական կուլտուրայի դերը հայ թատրոնի զարգացման մեջ» (1958), Դ. Հովնանի «Լունաչարսկին և Հայաստանը» (1968) մենագրական ուսումնասիրությունները:

Այս ուղղությամբ է իր գործունեությունը ծավալում նաև շեքսպիրագիտության հայկական կենտրոնը, որի գլխավոր նպատակներից մեկը Շեքսպիրից չթարգմանված երկերի թարգմանությունն է, մյուսը՝ հայ շեքսպիրագիտական միտքը գիտական հիմունքներով կազմակերպելն ու առաջ մղելը:

Կենտրոնը տպագրության է պատրաստում անգլիական դրամատուրգի պատմական քրոնիկների երկհատորյակը (թարգմանիչներ՝ Խ. Դաշտենց, Հ.

Սևան): Գիտական ապարատը պատրաստում են Ն. Մուրադյանը, Բ. Անդրեասյանը, Ա. Գրիգորյանը և Ա. Հովսեփյանը: Պատմական բոնիկները լույս են տեսնելու «Դրական հուշարձաններ» մատենաշարով: Կենտրոնը պարբերաբար հրատարակում է «Շեքսպիրական» ժողովածուն, որի առաջին երեք գրքերն արդեն լույս են տեսել (1966, 1967, 1970): Հրապարակվել են նաև Հովհաննես Հովհաննիսյանի «Վիլյամ Շեքսպիր» (1965), Հովհաննես Թումանյանի «Շեքսպիրի մասին» (1969) գրքույկները:

Ինստիտուտի մի ուղղությունն ԱՐՎԵՍՏԻ ԺԱՌԱՆԴՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ է:

Ինստիտուտը վաղուց ձեռնամուխ է եղել և այժմ ավարտելու վրա է Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործությունների ժողովածուի հրատարակությունը տասնմեկ հատորով: Արդեն հրապարակի վրա է 9 հատոր (խմբագրությամբ Դ. Բուդաղյանի):

Ինստիտուտի նախաձեռնությամբ սկսված է Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակությունը՝ 12 հատորով: Առաջին երեք հատորներն արդեն լույս են տեսել (1960, 1963, 1969, խմբագրությամբ Ռ. Աբայանի): Պատրաստվում է տպագրության Ռոմանոս Մելիքյանի երաժշտական ժառանգությունը երեք հատորով (խմբագրությամբ Ռ. Ստեփանյանի):

Առիթից օգտվելով հիշատակենք, որ հիմք է դրված նաև «Կոմիտասական» ժողովածուի հրատարակության, որի առաջին գիրքը լույս տեսավ կոմպոզիտորի ծննդյան 100-ամյակի օրերին (1969):

Որոշված է սկսել Թորոս Թորամանյանի երկերի ակադեմիական հրատարակությունը: Դրանից հետո հնարավոր կդառնա մեծանուն գիտնականի ընտիր երկերի թարգմանությունը ռուսերեն և այլ լեզուներով:

Ծրագրվում է լույս ընծայել Հ. Ստրժիկովսկու «Հայերի ճարտարապետությունը ու Եվրոպան» աշխատությունը՝ ռուսերեն թարգմանությամբ:

Այս ուղղությամբ կատարված աշխատանքներից է նաև «Նյութեր հայ արվեստի համար» մատենաշարը, որից լույս են տեսել «Արշակ Բուրջալյան» (1959, կազմող՝ Ս. Ռիզաև), «Ալեքսանդր Թամանյան» (1960, կազմող՝ Լ. Զորյան), «Սպիրիդոն Մելիքյան» (1964, կազմող՝ Ալ. Թադևոսյան), «Սուրեն Խաչատրյան» (1960, կազմող՝ Բ. Հարությունյան): Այդ մատենաշարով տպագրության է պատրաստված «Ռոմանոս Մելիքյան» (կազմող՝ Քնարիկ Գրիգորյան) գիրքը: Լույս է տեսել նաև Թորոս Թորամանյանի «Նամակներ» ժողովածուն (1968, կազմող՝ Ն. Թորամանյան):

Բացի այդ՝ լույս են տեսել «Թումանյանը արվեստի մասին» (1969, կազմող՝ Ի. Սաֆրազբեկյան) և Լևոն Քալանթարի «Արվեստի մայրուղիներով» (1963, կազմող՝ Է. Մանուկյան) աշխատությունները:

Անհրաժեշտ է հիշատակել նաև մի աշխատանք, որ կատարվում է հիմա և նորություն է մեր գիտության ու արվեստի կյանքում: Կառավարության առաջարկով արվեստի ինստիտուտը պատրաստեց Դառնի տաճարի վերականգնման գիտական հիմնավորումը: Եվ այժմ Պետշինի հետ միասին ինստիտուտը զբաղված է Դառնիի վերականգնման գործով, որը գլխավորում է Ալ. Սահինյանը:

ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԳԻՏԱԿԱՆ ԼԱՅՆ ԿԱՊԵՐԻ ՄԵՋ է մի կողմից՝ Մոսկվայի, Լենինգրադի և մյուս եղբայրական հանրապետությունների, մյուս կողմից՝ օտարերկրյա գիտական հաստատությունների հետ:

Մեր աշխատակիցները մասնակցում են Սովետական Միության ժողովուրդների երաժշտության, թատրոնի և կինոյի պատմության նվիրված բազմահատորյակների աշխատանքներին (հեղինակներ՝ երաժշտության գծով Մ. Մուրադյան, Գ. Գյոդակյան, Գ. Տիգրանով, թատրոնի գծով՝ Բ. Հարությունյան, կինոյի գծով՝ Ս. Ռիզաև): ՍՍՀՄ գեղարվեստական ակադեմիային կից գործող արվեստի պատմության և տեսության ինստիտուտը հրատարակության է պատրաստում «Սովետական Միության ժողովուրդների արվեստի պատմությունը»՝ 8 հատորով, որը լուսաբանելու է ճարտարապետության և կերպարվեստի պատմությունը: Մեր կողմից, որպես հեղինակներ մասնակցում են Ս. Մնացականյանը, Ալ. Սահինյանը, Ռ. Դրամբյանը, Ն. Ստեփանյանը, Լ. Բաբայանը:

Արվեստի ինստիտուտի և Միլանի «Պոլիտեխնիկոյի» հումանիստիկայի ինստիտուտի համագործակցությամբ հիմք է դրվել «Վավերագրեր հայ ճարտարապետության» մատենաշարին, մի շքեղ հրատարակություն, որը իրականացվում է Իտալիայում: Արդեն լույս են տեսել այդ մատենաշարի առաջին երեք գրքերը՝ «Հաղպատ» (1968), «Խաչքարեր» (1969) և «Սանահին» (1970) (հեղինակներն են՝ Ստ. Մնացականյանը, Լ. Ազարյանը, Հ. Ղալփախչյանը՝ Հայաստանից, Ալպագո Անդրիանո Նովելլոն, Արմեն Մանուկյանը՝ Իտալիայից): Այժմ տպագրության է հանձնված և մյուս տարի լույս կտեսնեն՝ «Գեղարդ», «Տաթև»: Տպագրության են պատրաստվում՝ «Անբերդ», «Գոշավանք», «Սաղմոսավանք»: Այս գործի կազմակերպման և նյութերը հայերենից իտալերենի թարգմանելու գործն իր վրա է վերցրել Ա. Զարյանը:

Երկու ինստիտուտների համագործակցությունը մոտիկ ապագայում կընդլայնվի և, բացի վերոհիշյալ մատենաշարից, կհրատարակվի «Անիի ճարտարապետությունը» խորագրով մի ժողովածու: Ծրագրվում է լույս ընծայել նաև Թորոս Թորամանյանի ընտիր երկերի միհատորյակը:

Ինստիտուտը համագործակցում է նաև Հռոմի համալսարանի Միջնադարյան արվեստի պատմության ու էգեյան-Միկենյան-Անատոլյան ինստիտուտների հետ:

«Շեքսպիրյան կենտրոնը» կապեր է հաստատել գերմանական Շեքսպիրյան ընկերության (Վայմար) և Ամերիկյան Շեքսպիրյան ընկերության (Նյու-Յորք) հետ: Մեր կենտրոնի հետ կապված են լեհ և չեխ շեքսպիրագետներ՝ Ստանիսլավ Հելշտինսկի, Զդենեկ Ստրիբրնի:

«Շեքսպիրականին» աշխատակցում են օտարերկրյա շեքսպիրագետներ՝ Ռոբերտ Վայման (Բեռլին), Լուսինե Սիտան (Փարիզ), Մարվին Ռոզենբերգ (Կալիֆորնիա):

Ինստիտուտը յուրաքանչյուր տարի ընդունում է հայ արվեստով հետաքրքրվող տարբեր երկրների մասնագետների՝ Շվեդիայից՝ Սվանսարյոմ Գանար (1961), Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունից՝ Գերդա Հերման, Էդիտ Նոյբաուեր (1963), Ֆրանսիայից՝ Սիրարփի Տեր-Ներսիսյան (1960, 1969), Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետությունից՝ Վոլֆգանգ Շյոն, Ռուդոլֆ Վեսինըբերգ, Լիզե Լոտտ-Մյուլլեր (1965), Ռումինիայից՝ Ոլիա Սորին (1965), Պաուլ Պետրեսկու (1966), Իտալիայից՝ Թոմազո Բրեչիա Ֆրատադոկի, Պաոլո Կունեո, Մաուրիցիո Գուիդի, Ջանլաիջի Նիգրո, Էջուջինիո Մոնտի (1966, 1968), Ադրիանո Ալպագո Նովելլո, Արմեն և Հայկ Մանուկյաններ, Հարություն Ղազանչյան, Նոզարո, Հերման Վահրամյան (1967, 1969, 1970), Ջեզա Ֆրանկովիչ, Դի Մաֆեյ (1970), Լեհաստանից՝ Պյոտր Սկուբիշևսկի

(1966), Հունգարիայից՝ Կարոլ Գոմբոշ (1969), Լադիսլավ Դերևի (1969), Նորա Արադի (1969), Էլժբետ Զեմեկի-Տոմպոշ (1969. 1970). Բելգիայից՝ Ժակլին Լաֆոնտեն Դոսոն (1969), Բուլղարիայից՝ Ստամեն Դամյանով Միխայլով (1970):

Ինստիտուտի աշխատակիցները մասնակցել են միջազգային գիտաժողովների: Անտրոպոլոգիական և էտնոգրաֆիական գիտությունների միջազգային կոնգրեսում զեկուցումներով հանդես են եկել Ռ. Աբայանը. Ս. Դավթյանը, Ալ. Սահինյանը (Մոսկվա, 1964): Արևելյան Եվրոպայի երկրների հին երաժշտությանը նվիրված միջազգային գիտաժողովին զեկուցումով մասնակցել է Ռ. Աբայանը (Վարշավա, 1969), Շեքսպիրյան ավանդական հավաքին զեկուցումով մասնակցել է Ռ. Զարյանը (Վայմար. 1970), Դյուլբենկյան երաժշտական ֆեստիվալի գիտաժողովում զեկուցում է կարդացել Ռ. Աբայանը (Լիսաբոն, 1970):

1965-ից Արվեստի ինստիտուտին կից գործում է արվեստագիտության դոկտորի և թեկնածուի, ինչպես նաև ճարտարապետության դոկտորի և թեկնածուի աստիճաններ շնորհող գիտական խորհուրդ, որը կազմակերպել է ոչ միայն ինստիտուտի աշխատակիցների, այլ նաև կոնսերվատորիայի, պոլիտեխնիկական ինստիտուտի, գեղարվեստա-թատերական ինստիտուտի դասախոսների, ինչպես նաև հարևան հանրապետությունների դիսերտանտների դիսերտացիաների պաշտպանությունը:

Ինստիտուտը գիտական կոորդինացիայի մեջ է մեր ակադեմիայի տարբեր ինստիտուտների հետ, առանձնապես հնագիտության և ազգագրության, քանի որ տեղումներ կատարող հնագիտական արշավախմբերի պետերի տեղակալները, ըստ ընդունված կարգի և նպատակահարմարության, հարտարապետներ են (Դասնիում՝ Ալ. Սահինյան, Արմավիրում (Արգիշտիխինելի)՝ Կոր. Ղաֆադարյան):

Ինստիտուտը ՀԱՄԱԴՈՐԴԱԿՑՈՒՄ Է ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ: Նկարիչների ու Կոմպոզիտորների միության, Թատերական ընկերության հետ միասին ինստիտուտը կազմակերպել է գիտական հումանիտար նստաշրջաններ: Պետշինի և Ճարտարապետների միության հետ միասին չորս տարի բնության է առել հանրապետության ճարտարապետական և շինարարական մի շարք հարցեր (1958, 1961, 1963, 1965): Թատերական ընկերության հետ միասին կազմվել են թատերագիտական խմբեր, որոնք ուսումնասիրել են Կիրովականի (1967) և Լենինականի (1970) թատրոնների գեղարվեստական մակարդակը, արծարծելով ռեպերտուարային քաղաքականության, ռեժիսուրայի, բեմական վարպետության, բեմական խոսքի խնդիրներ: 1958—1970 թթ. ինստիտուտին կից գործող խեցեգործական արվեստանոցը պատրաստել է խեցեղործության օրինակելի նմուշներ հանրապետության գեղարվեստական արտադրության համար: Նկարիչների միության հետ միասին կազմակերպվել է կիրառական արվեստի ցուցահանդես, ինչպես և աուկիսներ տեսական հարցերի շուրջ՝ «Դերասանը և ժամանակը» (Թատերական ընկերության հետ, 1961), «Վերջին տարիների հարտարապետության ոճական տեղաշարժերը» (Ճարտարապետների միության հետ, 1967):

Ինստիտուտը գիտական արտագնաց նստաշրջաններ է հրավիրել հանրապետության շրջաններում՝ Ալավերդի (1962), Վանաձոր (1967), Կիրովական

(1965, 1970), Նոյեմբերյան (1967), Ստեփանավան, Կտմո (1970): Գիտական երկու նստաշրջան է անցկացվել նաև Լենինականում (1970):

Ինստիտուտի գիտնականները «Գիտելիք» ընկերության աշխատանքներին մասնակցում են գործուն կերպով, կարդում բազմաթիվ հրապարակային դասախոսություններ արվեստի տարբեր հարցերի շուրջ:

Ընկերությունը հրատարակել է Մ. Սարգսյանի «Հովհաննես Այվազովսկի» (1967) և Գ. Հովնանի «Երգ, որ ցնցեց ամբողջ աշխարհը» (1970) հանրամատչելի գրքույկները:

Ինստիտուտին կից ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՆ մասնագետներ է պատրաստում ոչ միայն գիտա-հետազոտական հիմնարկների, այլ նաև բուհական հաստատությունների համար: Մինչև հիմա ինստիտուտը պատրաստել է 28 ասպիրանտ (երաժշտության գծով՝ 12, ճարտարապետության՝ 5, թատրոնի՝ 6, կերպարվեստի՝ 6, կինոյի՝ 2, շեֆասպիրագիտության՝ 1): Այժմ ասպիրանտուրայում սովորում են 9 հոգի: Ասպիրանտների մեծ մասը հաջողությամբ ավարտելով ուսումնական դասընթացը, թեկնածուական դիսերտացիաներ են պաշտպանել:

Հաշված Արվեստի պատմության և տեսության սեկտորի հրատարակությունները, ինստիտուտը 12 տարվա ընթացքում հրատարակել է 65 անուն գիրք:

Ինստիտուտը տպագրության է հանձնել «Սովետահայ կերպարվեստի պատմություն» (հեղինակներ՝ Ռ. Պարսամյան, Մ. Այվազյան, Մ. Ղազարյան և Ն. Ստեփանյան), Մ. Ղազարյանի «XVII—XVIII դարերի հայ կերպարվեստը» (գեղանկարչություն), Կ. Հովհաննիսյանի «Ուրարտական որմնանկարները» (Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հետ միասին), Մ. Հասրաթյանի «Սյունիքի ճարտարապետական անսամբլները», Կ. Խուդաբաշյանի «Բազմաձայնության զարգացման վաղ շրջանը հայ երաժշտության մեջ», Վ. Մաթևոսյանի «Հակոբ Կոջոյան» մենագրությունը, Մ. Սարգսյանի «Հովհաննես Այվազովսկին», Ս. Դավթյանի երկու հետազոտությունը՝ «Հայկական ասեղնագործություն», «Հայկական կարպետ»:

Այս է Արվեստի ինստիտուտի 12-ամյա գիտական գործունեության փաստագրական պատկերը:

Ինստիտուտի գործունեության շառավիղը, ինչպես ցույց են տալիս բերված վկաստերը, աստիճանաբար բավական ընդլայնվել է, հետազոտության առարկա ունենալով մեր արվեստի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Կենսական համարելով սովետահայ արվեստի, նրա պատմության ու արդի վիճակի հետ կապված խնդիրների լուսաբանությունը, վերջին տարիներին ինստիտուտում միաժամանակ հատուկ ուշադրություն է դարձվել միջնադարյան արվեստի ուսումնասիրությանը, ոչ միայն ճարտարապետություն, որ միշտ էլ հետազոտվել է, այլ նաև միջնադարյան երաժշտություն, միջնադարյան մանրանկարչություն: Բավական է ասել, որ այժմ ուսանող ասպիրանտներից շորսը մասնագիտանում են միջնադարյան արվեստի տարբեր ճյուղերում:

Հետազոտելով հին և միջին դարերի արվեստի ու ճարտարապետության պատմությունը, հայկական արվեստի XIX դարը, նրա զարգացման բարդ ընթացքն իր ականավոր դեմքերով՝ ինստիտուտն իրեն կապված է զգում մեր ժամանակի հետ և արդի արվեստի երևույթների քննությանն անդրադառնում է ամենագործուն կերպով, քաղաքացիական պարտքի զգացողությամբ: